ՀԱԿԱՔԱՅԼԻ ԿԱՐԻՔ

Վերջերս «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական խմբագրությունը եթեր է արձակել տեղեկություններ հայ–ադրբեջանական բախման գոտում (ձեւակերպումը այդ իսկ խմբագրությանն է) ադրբեջանցիների կրած նյութական կորուստների մասին: Տվյալները հավաքվել ու ներկայացվել են ոմն Թափլըղ Կուլիեւի կողմից, եւ չնայած վերնագրում նախազգուշացվում է, որ տեղեկությունները չեն վերաբերում այսպես կոչված Վերին Ղարաբաղին, տեղեկանքն սկսվում է հենց այդ տարածքից, այսինքն Լեռնային Ղարաբաղից եւ շարունակվում «նույն ոգով»:

Այստեղ մենք չենք անդրադառնա տեղեկանքում բերված բոլոր տվյալների իսկության կամ կեղծության խնդրին, քանի որ դա ավելի մանրակրկիտ ու տեւական վերլուծություն է պահանջում, սակայն որոշ տվյալներ արդեն առաջին հայացքից այնքան անհամոզիչ ու անտրամաբանական են, որ ենթակա են «ինքնասպանության»: Օրինակ, տեսության հենց սկզբում հավաստվում է (ինչպես ասացինք, տեղեկությունները վերաբերում են միայն հայերի կողմից զավթված յոթ շրջաններին, որոնք չեն մտնում «Վերին Ղարաբաղի» տարածքի մեջ), որ «հայ–ադրբեջանական բախման ընթացքում հայկական բանակի կողմից զավթվել են Վերին Ղարաբաղի 219 բնակավայր (4400 քառ. կմ տարածությամբ), որոնք հանդիսանում են Ադրբեջանի սուվերեն տարածքները»: Վերջին դարձվածքին էլ չենք անդրադառնա, քանի որ նման հայտարարությունները ինքնըստինքյան կորցնում են իրենց համոզչականությունը. ...ող նոփտոփնքնեռք միայն մի քանի տվյալներ: Քանի որ պարզություն չի մտցված «հայկական բանակ» հասկացության մեջ (տվյալ տեղեկանքի մի այլ մասում խոսվում է ԼՂ սահմաններից դուրս ադրբեջանական շրջանները զավթած էթնիկական հայերի մասին), ապա ստիպված ենք ենթադրել, որ Լեռնային Ղարաբաղի հայերը «զավթել են իրենց իսկ բնակավայրերը»: Դեռ ավելին՝ ավերել են իրենց տները... Չե՞ք հավատում: Սիավասինկ ինչ է ասվում տեղեկանքում. «Հայ զավթիչները ավերել են ավելի քան 800 բնակավայր»: Եվ դա այն դեպքում, երբ հենց սույն տեղեկանքի համաձայն, գրավված յոթ շրջաններում (բացառությամբ ԼՂՀ–ի) կա ընդամենը 692 բնակավայր: Եթե նույնիսկ ենթադրենք, որ ռազմական գործողությունների ընթացքում (իսկ դրանք, ինչպես հայտնի է, միակողմանի չեն լինում) ավերվել են այդ բոլոր բնակավայրերը, ապա մնացյալ ավերածությունները բաժին են ընկնում ԼՂ–ին: Թերեւս հենց այդպես էլ կա, բայց դա արդեն ադրբեջանական բանակի ու վարձկանների «հունարն» է, քանի որ նրանք գերազանցում էին ավերիչ ու զանգվածային ոչնչացման տեխնիկայով ինչպես ցամաքային, այնպես էլ օդային եւ նույնիսկ հեռահար ծովային:

Տեղեկանքի մեջ հաղորդվում է, որ պատերազմի սկզբից առայսօր զոհվել է ավելի քան 16 հազար եւ վիրավորվել ավելի քան 22 հազար ադրբեջանցի, որոնցից 5600–ը դարձել են հաշմանդամներ: Երկար կանգ չառնենք նաեւ այս ցավալի թվերի վրա, սակայն, դարձյալ առաջին հայացքից եւ նկատի ունենալով այն առասպելական թվերը, որ ադրբեջանցիները ներկայացնում են իբրեւ Հայաստանում կամ ԼՂՀ–ում պահվող ռազմագերիների թվաքանակ (նույն ռադիոկայանի ավելի վաղ տրամադրած «տվյալների» համաձայն, իբր միայն Սպիտակ քաղաքում պահվում են... 20000 ադրբեջանական ռազմագերիներ), զոհված ադրբեջանցիների քանակը թվում է բավականին նվազեցված:

Յուրաքանչյուր շրջանի տեսության վերջում թվարկվում են պատմամշակութային հուշարձաններ, ընդ որում սաստիկ աղավաղված անվանումներով, մանավանդ եթե դրանք հնագույն հայկական պաՀրմաճարտարապետական բնույթի են («քարայր–աղոթարաններ» եւ չգիտես թե էլ ինչ): Բերենք միայն մեկ օրինակ. Քելբաջարի շրջանի բազում պատմական հուշարձաններից նշված է միայն ինչ–որ «Խութավենգյան աղոթարան» Թարթառ գետի հովտում: Տվյալ դեպքում պարզ է, որ խոսքը հռչակավոր ԽՈՒԹԱՎԱՆՔԻ մասին է, իսկ մնացած դեպքերում հայկական անվանումները կամ չափազանց աղավաղված են (անշուշտ, միտումնավոր կերպով), կամ էլ բոլորովին չեն հիշատակվում: Իսկ այդ հուշարձանները բարբարոսաբար ոչնչացվել են ադրբեջանցիների կողմից ռազմական գործողությունների սկսվելուց շատ ավելի վաղ:

Տեղեկանքի վերջում ըստ յուրաքանչյուր գրավված շրջանի բերվում են ադրբեջանցիների կրած նյութական վնասների վերջնահաշիվները արտահայտված ԱՄՆ–ի դոլարներով, որոնք ընդհանուր առմամբ կազմում են. «Վերին Ղարաբաղ»– 380 մլն. դոլար, մնացած յոթ շրջանները միասին– 770 մլն. դոլար (ընդամենը 1 միլիարդ 150 միլիոն ամերիկյան դոլար): Բացի դրանից, տվյալներ են բերվում Հայաստանին սահմանակից ադրբեջանական շրջանների նյութական կորուստների մասին:

Փորձենք կռահել, թե ինչ է նշանակում ադրբեջանցիների այս հերթական աղմկարար քայլը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն «վավերագիրը» եթեր է արձակվել համայն աշխարհի վրա իր ալիքները սփռող ռադիոկայանի կողմից այնպիսի մի պահի, երբ տարածաշրջանում իր այցելությունն էր սկսել ՄԱԿ–ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին: Արդյո՞ք դա մի պարզ զուգադիպություն է: Հազիվ թե: Եվ սա ավելին է, քան մի հերթական քարոզչություն: Ամենայն հավանականությամբ, Ադրբեջանը սկսում է նախահաշիվ ներկայացնել պատերազմում իր կրած վնասների դիմաց, այսինքն մտադրություն ունի «կոնտրիբուցիա» պահանջել նյութական արժեքներ, որոնք պատերազմից հետո գանձվում են պարտված պետությունից հօգուտ հաղթող պետության: Բայց քանի որ նման ձեւակերպումը Ադրբեջանին հարմար չի գալիս, բացի դրանից, ժամանակակից միջազգային իրավունքը արգելել է կոնտրիբուցիան (որպես միջազգային իրավունքի ինստիտուտ), եւ, չնայած դրան, ադրբեջանցիները հայ ազգաբնակչության սոսկալի կողոպուտի ճանապարհով արդեն իսկ լրացրել են մի քանի կոնտրիբուցիաների չափաքանակ, ապա Ադրբեջանը կաշվից դուրս է գալիս, որպեսզի համաշխարհային հանրությանը ներկայանա իբրեւ ագրեսիայի զոհ եւ դրանով իսկ ՌԵՊԱՐԱՑԻԱՆԵՐ ստանալու իրավունք ձեռք բերի: Երկու հասկացություններն էլ հարեն հնչում են որպես «ռազմավարքանք», չնայած նրանց միջեւ կա որոշակի տարբերություն: Ռեպարացիաների իրավունքը վերապահված է այն պետությանը, որը դարձել է ագրեսիայի զոհ, եւ ռազմատուգանքներ է վճարում ագրեսիա իրագործած պետությանը: Ռազմատուգանքների չափը որոշվում է խաղաղության պայմանագրով կամ որեւէ այլ իրավական փաստաթղթով: Ադրբեջանը, ամենայն հավանականությամբ միտված է այն բանին, որպեսզի այդ խնդիրը մտցվի քննարկվող քաղաքական մեծ համաձայնագրի կամ ԵԱՀԽ–ի խաղաղարար նախագծերի մեջ: Հետեւապես, ստեղծված քաղաքական իրադրության մեջ, երբ Մոսկվայում շարունակվում են բանակցությունները խաղաղ պայմանագրի շուրջ, Ադրբեջանը «ձիու քայլ» կատարելու մտադրություն ունի:

Ուստի անհրաժեշտ են անհապաղ հակամիջոցառումներ, առաջին հերթին, թեկուզեւ համառոտ մի «հակատեղեկանք» այն վնասների մասին, որ կրել է հայկական կողմը ի հետեւանս ԼՂՀ–Ի ԵՎ ՀՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԴԵՄ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՈՒ ՉԴԱԴԱՐՈՂ ՍԱԴՐԱՆՔՆԵՐԻ: Սկզբի համար բավարար կլիներ այդ տեղեկանքի հաղորդման հնարավորությունը «Ազատություն» ռադիոկայանի հայկական (ցանկալի է նաեւ ռուսական) խմբագրությունների կողմից:

Բայց ընդհանրապես պետք է հիմնարար աշխատանք տանել հետեւյալ իրականությունները ի հայտ բերելու եւ հրապարակելու ուղղությամբ.

1. Ադրբեջանում հայ ազգաբնակչության բնաջնջումը եւ բռնի տեղահանությունը (Սումգայիթ, Բաքու, Կիրովաբադ, Մինգեչաուր, Բուն Աղվանք, Գարդման, Հյուսիսային Արցախ...) այդ բնակչության կրած մոտավոր նյութական վնասների հաշվառմամբ:

2. «Օղակ» գործողության հետեւանքով հայ բնակչության կրած նյութական ու բարոյական վնասները:

3. ԼՂՀ–ի դեմ Ադրբեջանի ձեռնարկած ագրեսիայի հետեւանքով Լեռնային Ղարաբաղի հայության կրած նյութական ու բարոյական վնասները:

4. ՀՀ սահմանամերձ շրջանների դեմ ադրբեջանական բանակի չդադարող սադրանքների հետեւանքով Հայաստանի կրած վնասները:

5. Գրավյալ շրջաններում (որոնք իրականում բուն հայկական հողեր են) հայկական մշակույթի հուշարձանները, որոնք տակավին մինչեւ արցախցիների ազգային–ազատագրական պատերազմի սկիզբը ծրագրավորված ոչնչացվում էին ադրբեջանցիների կողմից:

Իսկ ընդհանրապես նպատակահարմար կլիներ ամենայն համոզչականությամբ տեղեկացնել համաշխարհային հանրությանը եւ շահագրգիռ կողմերին, որ հիշված գրաված տարածքները իրենցից ներկայացրել են ամրացված կրակակետեր, որտեղից կազմակերպվում էին ԼՂՀ ամբողջ կենսատարածքի գնդակոծություն, հրետակոծություն, հրթիռակոծություն, ռմբակոծություն, խորը ներթափանցող գրոհներ, ինչի հետեւանքով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությունը մշտապես գտնվում էր ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի տակ: Ուստի այդ կրակակետի վերացումը հարկադրված միջոց էր եւ այլընտրանք չուներ:

ԷԴՈՒԱՐԴ ԲԵԳԼԱՐՅԱՆ